ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
<<ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ>>
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
г.ВЕДИ
ВЕДИНСКИЙ РОДДОМ
ЗАО

ք. Վեդի, Գայի 1
234 2-16-23
ՀՎՀՀ 04104551

«15» դեկտեմբերի 2014թ.

N 133

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/16» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:
<u>Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/16-2015/3»**</u>

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Վեդու ծննդատուն» ՓԲԸ, ք. Վեդի, Գայի 1, հաշվապահություն, մինչև 2014թ դեկտեմբերի 24-ը , ժամը 10:00: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գնորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի շենքում, ք. Վեդի, Գայի 1 հասցեով, հաշվապահությունում, 2014թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը:

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 64 չափաբաժիններից). Տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի ամբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՎԾ-ՇՀԱՊՁԲ -11/16» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ veducnndatun@mail.ru:

Հարգանքով՝

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

Կատարող՝ գնումների համակարգող՝
Գևորգ Ամիրջանյան,հեռ.091-27-71-56